Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2024 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Վերանայել Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված գնման երաշխիք ունեցող վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել սպառողների համար բացված անհատական հաշվառման քարտերում տեղեկատվության առկայության մոնիթորինգ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային և մանրածախ շուկայի առևտրային կանոններին համապատասխան:
- Լրամշակել էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը:
- Լրամշակել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները:
- Վերանայել գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագները:
- «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացնել գազամատակարարաման ընդհատման դեպքերի վերաբերյալ մոնիթորինգ:
- Լրամշակել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները:
- Վերանայել և լրամշակել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-բնակիչ

բաժանորդ) և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) պայմանագրերի օրինակելի ձևերը:

- Լրամշակել ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգը:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ:
- Իրականացնել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական և ամրակցված կապի ծածկույթների ապահովման աշխատանքներ:
- Իրականացնել հանրային կազմակերպությունների 2023 և 2024 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ:
- Մշակել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հանձնաժողովի 2023 թվականի գործունեության հաշվետվությունը:

Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցերին, ջրամատակարարման

և ջրահեռացման համակարգերին միացումների եռամսյակային ցուցանիշները: